ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2021-2022 ուսումնական տարվա միջին մասնագիտական կրթական ծրագրով 0911.01.5 «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության շրջանավարտների ամփոփիչ պետական ատեստավորման մասին

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրեն՝ Ի.Վարդանյանի 16.05.2022թ-ի № ԸԳ 36-Ա հրամանով ես, Արման Մանուկյանս ՀՀ ԿԳՄՍ նախարար՝ Վ.Դումանյանի 12.05.2022թ.№856-Ա/2 հրամանի համաձայն նշանակվել եմ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2021-2022 ուսումնական տարվա միջին մասնագիտական կրթական ծրագրով 0911.01.5 «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության շրջանավարտների ամփոփիչ պետական ատեստավորման հանձնաժողովի նախագահ:

Տնօրենի հրամանով ձևավորված ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովում, բացի Քոլեջի մասնագիտական ամբիոնի դասախոսական կազմից ընդգրկվել են նաև արտաքին շահակիցներ, հանրապետությունում ճանաչված այլ մասնագետներ:

- Նախագահ՝ Արման Մանուկյան («Նյու Հոփ» ատամնաբուժական կլինիկա ՍՊԸ-ի տնօրեն):
- Նախագահի տեղակալ՝ Նարինե Եգորյան (տնօրենի տեղակալ ուսումնական աշխատանքների գծով):
- Հանձնաժողովի անդամ՝ Արեգնազ Մելքոնյան (ամբիոնի վարիչ),
- Արման Կոստանյան (դասախոս),
- Սոկրատ Մանուչարյան (դասախոս),
- Վլադիմիր Դոշոյան (դասախոս),
- Քարտուղար՝ Անահիտ Գյոզալյան ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ:

Տնօրենի հրամանով ամփոփիչ պետական ատեստավորումը կազմակերպվել և անցկացվել էր 18.06.2022թ. – 24.06.2022թ., հետևյալ ժամանակացույցով.

- «Շարժական և բյուգելային պրոթեզների պատրաստման տեխնիկա» - 18.06.2022թ. (III^{Ա} և III^{Բ} խմբերում)
- «Ատամնատեխնիկական նյութագիտություն և անշարժ պրոթեզների պատրաստման տեխնիկա» - 24.06.2022թ. "(III^{Ա} և III^{Բ} խմբերում):

Ամբիոնի կողմից վերանայվել են «Շարժական և բյուգելային պրոթեզների պատրաստման տեխնիկա» և «Ատամնատեխնիկական նյութագիտություն և անշարժ պրոթեզների պատրաստման տեխնիկա» առարկաների հարցաշարերը, կազմվել են քննական տոմսերը:

Ամփոփիչ ատեստավորման ժամանակ հանձնաժողովին տրամադրվեցին հետևյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝

- ✓ քաղվածք ամփոփիչ ատեստավորումների կազմակերպման և անցկացման մասին հրամանից,
- ✓ քաղվածք տվյալ առարկայից ամփոփիչ ատեստավորմանը թույլատրելու մասին հրամանից,
- ✓ ակադեմիական առաջադիմության ամփոփագիր,
- ✓ ուսանողների ստուգման գրքույկները:

Ուսանողին տրվել էր առավելագույնը 20 րոպե ժամանակ (պատրաստվելու և քննական տոմսի հարցերին պատասխանելու համար):

Ամփոփիչ ատեստավորման ժամանակ ուսանողը ինքնուրույն ընտրում էր տոմսը, որից հետո տրվում ժամանակ պատրաստվելու և պատասխանելու համար: Քննական տոմսերում ներառված էր 3 հարց, որից՝ 1 տեսական, 2 գործնական հմտությունների ցուցադրում: Հանձնաժողովի նախագահի կողմից քննության ընթացքում որոշ ուսանոնղերին տրվել են մասնագիտական իրավիճակային խնդիրներ և առաջարկվել ներկայացնել դրանց լուծումների մի քանի տարբերակներ:

Ուսանողների տեսական գիտելիքները բավարարում էին մասնագիտական կրթության ծրագրով նախատեսված որակական պահանջներին և վերջնարդյուքներին:

Ատեստավորման արդյունքներն ամփոփելիս հանձնաժողովի անդամները արձանագրեցին, որ 2021-2022 ուստարվա շրջանավարտները բավականին պատրաստված էին, տիրապետում էին մասնագիտական տեսական, գործնական գիտելիքներին և հմտություններին: Հանձնաժողովի անդամները ևս համակարծիք էին, որ արդյունքները գոհացուցիչ էր: Ես այն կարծիքին եմ, որ Քոլեջում ստեղծված են անհրաժեշտ բոլոր պայմանները՝ որակյալ մասնագետներ պատրաստելու համար:

Ամփոփիչ ատեստավորման արդյունքները III^{Ա} խմբում հետևյալն են.

N	Համալիր միջմոդուլային քննություն	Ուսանող. թիվ	9-10	7-8	4-6	1-3	Չի ներկայացել
1.	«Շարժական և բյուգելային պրոթեզների պատրաստման տեխնիկա»	18	3	6	9	--	--
2.	«Ատամնատեխնիկական նյութագիտություն և անշարժ պրոթեզների պատրաստման տեխնիկա»	18	4	3	11	--	--

Ամփոփիչ ատեստավորման արդյունքները III^{Բ} խմբում հետևյալն են.

N	Համալիր միջմոդուլային քննություն	Ուսանող. թիվ	9-10	7-8	4-6	1-3	Չի ներկայացել
1.	«Շարժական և բյուգելային պրոթեզների պատրաստման տեխնիկա»	3	1	2	--	--	--
2.	«Ատամնատեխնիկական նյութագիտություն և անշարժ պրոթեզների պատրաստման տեխնիկա»	3	1	2	--	--	--

Երկու քննությունների ընթացքում բարձր մասնագիտական գիտելիքներ ցուցաբերեցին՝ Մերի Վերանյանը, Աշոտ Խուդաթյանը, Ռաֆայել Դոշոյանը և Արտակ Հովսեփյանը:

Քննասենյակը կահավորված էր պատշաճ մակարդակով, սենյակում, առանձին սեղանի վրա առկա էին մասնագիտական գործիքներ, նյութեր, սարքավորումներ, պրոթեզներ, ինչպես նաև մասնագիտական դիդակտիկ նյութեր:

Շրջանավարտների տեսական պատասխանները բավականին գոհացուցիչ էին, սակայն ցանկալի է ամփոփիչ ատեստավորման քննություններից մեկը անցկացնել ավարտական (դիպլոմային) աշխատանքի պաշտպանությամբ:

Այս անգամ նորամուծությունը այն էր, որ 0911.01.5 «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության 2 շրջանավարտներ՝ Մերի Վերանյանը և Աշոտ Խուդաթյանը ներկայացրեցին իրենց ավարտական աշխատանքները:

Առաջարկություններ.

1. Երկու ամփոփիչ ատեստավորումներից մեկը լինի ամբողջության ավարտական աշխատանքի պաշտպանություն, համաձայն գործող ՊԿՁ-ի պահանջների:
2. Հնարավորություն տալ ուսանողներին ներկայացնել և բացատրել որևէ իրավիճակ, առաջարկելով լուծման տարբերակներ:
3. Քննասենյակում առանձին տեղում լինեն մասնագիտական գրականություն:
4. Հնարավորություն տալ ուսանողներին քննության ժամանակ օգտվելու մասնագիտական գրականությունից:

Պետական որակավորման հանձնաժողովի նախագահ՝ _____ Արման Մանուկյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2021-2022 ուսումնական տարվա միջին մասնագիտական կրթական ծրագրով 0916.01.5 «Դեղագործություն» մասնագիտության շրջանավարտների ամփոփիչ պետական ատեստավորման մասին

«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի տնօրեն՝ Ի.Վարդանյանի 16.05.2022թ-ի № ԸԳ 35-Ա հրամանով ես, Կարեն Սարգսյանս ՀՀ ԿԳՄՍ նախարար՝ Վ.Դումանյանի 12.05.2022թ.№856-Ա/2 հրամանի համաձայն նշանակվել եմ «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի 2021-2022 ուսումնական տարվա միջին մասնագիտական կրթական ծրագրով 0916.01.5 «Դեղագործություն» մասնագիտության շրջանավարտների ամփոփիչ պետական ատեստավորման հանձնաժողովի նախագահ:

Տնօրենի հրամանով ձևավորված ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովում, բացի Քոլեջի մասնագիտական ամբիոնի դասախոսական կազմից ընդգրկվել են նաև արտաքին շահակիցներ, հանրապետությունում ճանաչված այլ մասնագետներ:

- Նախագահ՝ Կարեն Սարգսյան («Դենտալ Ֆարմ» ՍՊԸ տնօրեն):
- Նախագահի տեղակալ՝ Իրինա Վարդանյան (Քոլեջի տնօրեն):
- Հանձնաժողովի անդամ՝ Սեդա Կեսոյան (ամբիոնի վարիչ),
- Աննա Վարդանյան (դասախոս),
- Լևոն Ալեքսանյան (դասախոս),
- Նելլի Հայրապետյան (դասախոս),
- Քարտուղար՝ Անահիտ Գյոզալյան ՄՌԿ և ընդհանուր բաժնի վարիչ:

Տնօրենի հրամանով ամփոփիչ պետական ատեստավորումը կազմակերպվել և անցկացվել էր 17.06.2022թ.- 24.06.2022թ., հետևյալ ժամանակացույցով.

- «Դեղաձևերի տեխնոլոգիա» և «Ֆարմակագնոզիա» 17"06"2022թ. (III^{Ա} խումբ):
- «Դեղաձևերի տեխնոլոգիա» և «Ֆարմակագնոզիա» 18.06.2022թ.(III^{Բ} խումբ):
- «Դեղագործության կազմակերպում և էկոնոմիկա» և «Մասնավոր դեղաբանություն» 23.06.2022թ "(III^{Ա} խումբ):

- «Դեղագործության կազմակերպում և էկոնոմիկա» և «Մասնավոր դեղաբանություն» 24.06.2022թ "(III^{Բ} խումբ):

Ամբիոնի կողմից վերանայվել են «Դեղաձևերի տեխնոլոգիա», «Ֆարմակագնոզիա» և «Դեղագործության կազմակերպում և էկոնոմիկա», «Մասնավոր դեղաբանություն» առարկայական/մոդուլային դասընթացների հարցաշարերը, կազմվել են քննական տոմսերը:

Ամփոփիչ ատեստավորման ժամանակ հանձնաժողովին տրամադրվեցին հետևյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝

- ✓ քաղվածք ամփոփիչ ատեստավորման կազմակերպման և անցկացման մասին հրամանից,
- ✓ քաղվածք տվյալ առարկայից ամփոփիչ ատեստավորմանը թույլատրելու մասին հրամանից,
- ✓ ակադեմիական առաջադիմության ամփոփագիր,
- ✓ ուսանողների ստուգման գրքույկները:

Ուսանողին տրվել էր առավելագույնը 20 րոպե ժամանակ (պատրաստվելու և քննական տոմսի հարցերին պատասխանելու համար):

Ամփոփիչ ատեստավորման ժամանակ ուսանողը ինքնուրույն ընտրում էր տոմսը, որից հետո տրվում ժամանակ պատրաստվելու և պատասխանելու համար: Քննական տոմսերում ներառված էր 4 հարց, որից՝ 3 տեսական, 1 գործնական հմտությունների ցուցադրում: Հանձնաժողովի նախագահի կողմից քննության ընթացքում որոշ ուսանոնղերին տրվել են իրավիճակային խնդիրների վերլուծություն:

Ուսանողների տեսական գիտելիքները բավարարում էին մասնագիտական որակական պահանջներին:

Ատեստավորման արդյունքներն ամփոփելիս հանձնաժողովի անդամները ևս համակարծիք էին, որ ամփոփիչ ատեստավորման արդյունքները գոհացուցիչ էին: Ես այն կարծիքին եմ, որ Քոլեջում ստեղծված են անհրաժեշտ բոլոր պայմանները՝ որակյալ ուսումնական գործընթաց կազմակերպելու և մասնագետներ պատրաստելու համար:

Ամփոփիչ ատեստավորման արդյունքները III^{Ա} խմբում հետևյալն են.

N	Համալիր միջմոդուլային քննություն	Ուսանող. թիվ	9-10	7-8	4-6	1-3	Չի ներկայացել
1.	«Դեղաձևերի տեխնոլոգիա», «Ֆարմակագնոզիա»	19	4	8	7	--	--
2.	«Դեղագործության կազմակերպում և էկոնոմիկա», «Մասնավոր դեղաբանություն»	19	4	6	9	--	--

Ամփոփիչ ատեստավորման արդյունքները III^{Բ} խմբում հետևյալն են.

N	Համալիր միջմոդուլային քննություն	Ուսանող. թիվ	9-10	7-8	4-6	1-3	Չի ներկայացել
1.	«Դեղաձևերի տեխնոլոգիա», «Ֆարմակագնոզիա»	20	6	5	9	--	--
2.	«Դեղագործության կազմակերպում և էկոնոմիկա», «Մասնավոր դեղաբանություն»	20	6	6	8	--	--

Երկու քննությունների ընթացքում բարձր մասնագիտական գիտելիքներ ցուցաբերեցին՝ Արմինե Սերգոյանը, Էվելինա Չրաղյանը, Հռիփսիմե Աղաբեկյանը, Ջուլիետա Գրիգորյանը և Մանյա Պապյանը:

Շրջանավարտների տեսական պատասխանները բավականին գոհացուցիչ էին, սակայն ցանկալի է ամփոփիչ ատեստավորման քննություններից մեկը անցկացնել ավարտական (դիպլոմային) աշխատանքի պաշտպանությամբ:

Քննասենյակը կահավորված էր պատշաճ մակարդակով, սենյակի առանձին անկյունում սեղանի վրա առկա էին մասնագիտական գործիքներ, պարագաներ (հավանգներ, անոթներ, դեղամիջոցներ և այլն) և մասնագիտական դիդակտիկ նյութերով:

Այս անգամ ևս 0916.01.5 «Դեղագործություն» մասնագիտության բոլոր շրջանավարտները ներկայացրեցին իրենց կողմից իրականացված ինքնուրույն աշխատանքները ֆարմակագնոզիա մոդուլից:

Առաջարկություններ.

1. Երկու ամփոփիչ ատեստավորումներից մեկը լինի ամբողջության ավարտական աշխատանքի պաշտպանություն, համաձայն գործող ՊԿՉ-ի:

2. Հնարավորություն ընձեռել ուսանողներին ինքնուրույն ներկայացնել որևէ իրավիճակային խնդիր և տալ համապատասխան լուծում:
3. Ցանկալի է դեղերի էկոնոմիկա մոդուլում զարգացնել ուսանողի ինքնուրույն մտածելակերպը:
4. Ցանկալի կլիներ ամփոփիչ ատեստավորումը կազմակերպվեր դեղատան միջավայրում:

Պետական որակավորման հանձնաժողովի նախագահ՝ _____ Կարեն Սարգսյան